



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

ՀՀԴ 34-րդ Ընդհանուր Ժողով

2022թ. փետրվարի 28-ին Երեւանում տեղի է ունեցել Հայ Յեղափոխական Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովի բացման պաշտոնական արարողությունը, որին մասնակցում էին աշխարհի շուրջ 28 երկրներից ավելի քան 100 ներկայացուցիչներ եւ իրավիյալներ:

Միջոցառումը մեկնարկել է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության եւ ՀՀԴ օրհներգերով:

Տերունական աղոթքով հանդես է եկել Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսյանը եւ փոխանցել Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը:

Ելույթներով հանդես են եկել ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը եւ ՀՀԴ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթեյանը:

Ելույթի ավարտին ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչն իր շնորհակալական խոսքը հայտնեց ներկաներին եւ այն համակիրներին, բարերարներին, ովքեր երկար տարիներ ՀՀ Դաշնակցության կողքին են եղել:

Ընդհանուր ժողովը, որ ՀՀԴ համազգային կառույցի բարձրագույն ժողովն է, գումարվում է 4 տարին մեկ անգամ: 34-րդ Ընդհանուր ժողովն առաջինն է Արցախյան 44- օրյա պատերազմից հետո. կտեւի մինչեւ մարտի 8-ը:



Արեւան գնով ձեռք բերուած մեր յաղթանակը ոչնչացնելու այս ընթացքը պետք է կասեցուի. Յակոբ Տեր Խաչատուրեան

ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի ելույթը Հայ Յեղափոխական Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովի բացմանը:

«Յարգարժան հիւրեր, սիրելի հայրենակիցներ եւ ընկերներ,

Մի քանի շաբաթներ առաջ, Փետրուար 5-ին, Երեւանի մէջ նշուող ՀՀԴ Օրուան առթիւ մեր խօսքին ընդմէջէն մեր ժողովուրդին ներկայացուցինք 2021 տարուան մեր հաշուետուութիւնը եւ պարզեցինք Դաշնակցութեան դիրքորոշումները այսօրուան հիմնախնդիրներուն եւ մարտահրաւերներուն կապակցութեամբ:

Դաշնակցությունը քաղաքական ուժ ըլլալու կողքին այն կազմակերպութիւնն է, որ իր պատմութեամբ, գաղափարախօսութեամբ, բարոյական արժեքակարգով, տարբեր պայմաններու մէջ գործելու հանգամանքով, ցանցային կառուցուածքով ունի խիստ ուրոյն նկարագիր: Եւ այդ նկարագրին հաւատարիմ մնալով է, որ Դաշնակցությունը կարողացած է պահել իր կենսունակութիւնը:

Այսօր ՀՀԴ 34րդ Ընդհանուր ժողովի պաշտօնական բացման նիստով կը յայտնենք, որ Դաշնակցութեան մեծ ընտանիքի ներկայացուցիչները աշխարհի չորս ծագերէն հաւաքուած են հայրենիքի մէջ գումարելու ՀՀԴ կամքը ներկայացնող բարձրագոյն ժողովը, որուն որոշումները անառարկելի ու պարտադիր են Կուսակցութեան բոլոր ժողովներուն, բոլոր մարմիններուն եւ բոլոր ընկերներուն համար: Ընդհանուր ժողովը գերագոյն պահակն է ՀՀԴ գաղափարաբանութեան եւ բարոյական ըմբռնումներուն:

Այս Ընդհանուր ժողովը կը գումարուի մեր հայրենիքի ու հայութեան համար խիստ բախտորոշ ժամանակահատուածի մէջ. Հայաստանը կորսնցուցած է յաղթանակած երկիր ըլլալու հանգամանքը, Արցախը վիրաւոր է եւ աշխարհասփիւռ հայութիւնը տագնապահար վիճակի մէջ է: Մինչեւ Սեպտեմբեր 2020, մեր ազգային նորագոյն զարթօնքը Հայաստանի վերակախացումէն եւ Արցախի ազատագրումէն ետք, խարսխուած էր անխոցելիութեան պատրանքին վրայ եւ,

հակառակ ՀՀ բազմապիսի ներքին վերիվայրումներուն, մեր մտքին մէջ ամրագրած էր յաւերժական անկախ Հայաստանի տեսլականը: Այսօր՝ խաբխած է այդ տեսլականը ու հայկական անկախ պետականութիւնն ալ՝ վտանգուած: Այս իշխանութեան անընդունելի եւ աններելի քայլերու շնորհիւ տեղի ունեցաւ 44 օրեայ պատերազմի աղիտալի արդիւնքը, շարունակուող պառակտումի քաղաքականութեան սաստկացումը, մեր թշնամիներու հանդէպ ցուցաբերուող պարտուողական հոգեբանութիւնը, միակողմանի զիջումներու պատրաստակամութիւնը եւ կեղծ խաղաղութեան պատրանքով ժողովուրդը մոլորեցնելու ու թշնամիին հաճոյանալու ամբոխավարութիւնը:

Տասնամեակներու պայքարը իմաստագրելու, արեւան, տառապանքներու, զոհողութիւններու գնով ձեռք բերուած մեր յաղթանակը ոչնչացնելու այս ընթացքը պետք է կասեցուի: Մեր նոր պետականութեան, ազգային նորագոյն զարթօնքի խորհրդանիշ հանդիսացող Արցախը ծանրագոյն հարուած է ստացած, բայց մեզի պարտադրուող զիջումներու հետ համակերպուելու իրաւունք չունինք: Գոյաբանական սպառնալիքի դեմ հանդիման ենք. այսօր՝ մեր լինելիութեան, մեր արժանապատուութեան, մեր ապագայի հարցերը կը կազմեն մեր օրակարգը: Այս պայմաններուն մէջ ազգային բոլոր ուժերու գերխնդիրը մեր անկախ պետականութեան, հայրենիքի փրկութիւնն է: Զյաջողելու իրաւունք չունինք:

Բայց արտաքին թշնամիին դիմադրելու համար նախ պետք է մեր տունը կարգի բերենք: Այսօրուան պայքարը սոսկ իշխանութիւն-ընդդիմութիւն հարթութեան մէջ չէ, սա դասական իմաստով քաղաքական պայքար չէ, այլ պայքար է յանուն արժանապատուութեան, յանուն ազգային արժեքներու վերականգման, յանուն հայրենիքի փրկութեան: Այս համոզումը արմատաւորելու, այս գիտակցութեամբ պայքարը շարունակելու հարց ունինք:

Մեր ներկայ իրականութիւնը արժեքներու եւ հասկացողութիւններու ձեւախեղութեամբ արտացոլացումն է: Երեկուան ընտրակեղծարարները կը ներկայանան որ-

պէս արդարութեան պաշտպաններ, նախկին իշխանութիւններուն զխիկոր ծառայածները դարձած են բարեպաշտ քաղաքական գործիչներ, սակաւապետ-օլիգարխները՝ մեծ սեփականատէրեր կամ գործարարներ, նախապէս կողոպուտի եւ ուրիշներու բիզնեսներու մէջ փայ մտածները՝ նուիրատուներ, չկայացածները՝ յեղափոխական ու դուխով տղաք, ծախու վախկոտները՝ փողով հայիոյախառն «ստատուս» ու «քոմենթ» գրող, իսկ բանակէն խուսափածները՝ արցախեան ազատամարտի հերոսներուն հայրենասիրութիւն քարոզողներ: Հասարակութեան խեղուած արժեքահամակարգը պետք է շտկուի: Սա իւրաքանչիւր առողջ մտածողութիւն ունեցողի հարցն է: Քաղաքական նախընտրութիւնները, կուսակցական պատկանելութիւնը, ընկերային (սոցիալական) դիրքը եւ ունեցած հանգամանքը ամենեւին կարելի չեն: Անշուշտ, սա հեշտ գործ չէ, բայց այս է միակ ճիշտ ճանապարհը:

Ներկայիս նոր մարտահրաւերներու դեմ յանդիման կը գտնուինք, որովհետեւ պարտուած ու ազգային գաղափարախօսութեան պարպուած Հայաստանի իշխանութիւնները հայրենի շահերը պաշտպանելու իրենց անկարողութիւնը փաստած են, շարունակական նահանջի մէջ են միջազգային բեմերու վրայ եւ ամեն տեսակի զիջումներու ալ՝ պատրաստ: Իսկ Արցախի իշխանութիւնն ալ դարձուցած են կամակատար, այսպիսով նսեմացնելով Արցախի ինքնիշխանութեան մակարդակը: Բարեբախտաբար Արցախի մէջ կան նաեւ ազգային եւ ինքնորոյն ոյժեր, որոնք ամուր կանգնած են պատենէի վրայ եւ կը սատարեն Արցախի իրաւունքներու աներբ հետապնդման:

Նոր մարտահրաւերներու առջեւ է նաեւ Սփիւռքը, որ ցնցումի եւ յուսահատութեան կեցուածքէն պարտի անցնիլ վերստին պայքարի պատրաստակամութեան՝ ի շահ հայրենիքին ու հայութեան: Ունինք նաեւ Սփիւռքին նոր աւիշ եւ կենսունակութիւն ներարկելու խնդիր: Եւ մանաւանդ՝ ազգային օրակարգ ձեւաւորելու եւ անոր շուրջ ամբողջ հայութիւնը համախմբելու իրամայական:

Արեան գնով ձեռք բերուած մեր յաղթանակը ոչնչացնելու այս ընթացքը պետք է կասեցուի. Յակոբ Տեր Խաչատուրեան

1 ← Այդ մարտահրաւերներուն դիմագրաւելու ու մեր ընելիքները ճշդելու առաքելութեան պիտի լծուի 34րդ Ընդհանուր Ժողովը՝ ճշդելով յառաջիկայ քառամեակի մեր ռազմավարութիւնը, ուղղութիւններն ու առաջնահերթութիւնները թէ՛ հայրենի, թէ՛ սփիւռքեան ու թէ՛ համահայկական առումով:

Իւրաքանչիւր Ընդհանուր Ժողով իր օրակարգով կը կատարէ 337 Բիւրոյի գործունեութեան քննարկումը, ինչպէս նաեւ մշակումը՝ եկող քառամեակի քաղաքական ուղեգծին ու ռազմավարութեան եւ 3այ Դատի գործունեութեան ուղղութիւններուն. ժողովը նաեւ կ'ընդգրկէ ներազգային կացութեան գնահատումն ու քննարկումը, 337 կազմակերպական հարցերը, քարոզչական միջոցներն ու քաղաքականութիւնը եւ տնտեսական իրավիճակը: Այդ օրակարգերուն քննարկման ընդմէջէն պիտի բերեղանան Դաշնակցութեան յաջորդ քառամեակի կեցուածքներն ու առաջնահերթութիւնները:

Այդ որոշումները վստահաբար պիտի հիմնուին մեր երկար տարիներու հետեւեալ համագումարներուն ու իրավիճակի գնահատման վրայ՝

Ա) Արցախի վերականգնում - Մեր գնահատմամբ, Նոյեմբերի 9-ի տխրահռչակ, ըստ էութեան, անձնատուական (capitulation) զինադադարով ոչ թէ վերջակէտ է դրուած ամէն ինչի, այլ Նոր գործընթացներ սկսուած են: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, ներազգային առումներով մենք միանգամայն Նոր իրողութիւններու եւ մարտահրաւերներու առջեւ ենք կանգնած: Ունեցած ենք մարդկային, նիւթական, տարածքային եւ տնտեսական ահեղ կորուստներ: Անչափելի է նաեւ բարոյական կորուստը՝ վիրաւորուած է հայ մարդու արժանապատուութիւնը, սասանուած է մեր ազգային ինքնավստահութիւնը: 3սկայական ընելիք կայ եւ գերջանքեր գործադրելու անհրաժեշտութիւն:

Դաշնակցութեան համար Արցախի հարցը կը շարունակէ մնալ 3այ Դատի բաղկացուցիչ հիմնական մաս, հայոց անկախ պետականութիւնը՝ գերագոյն արժեք: Այս հասկացողութեամբ եւ Նոր պայմաններու թելադրանքով Դաշնակցութիւնն իր քույր կառույցներով եւ համակիրներով քաղաքական, դիւանագիտական, կազմակերպական, տնտեսական, բարեսիրական ուղղութիւններով լծուած է ամէնօրեայ աշխատանքի: Մենք հաւատացած ենք, որ ծրագրաւորուած, հետեւողական, ճիշտ աշխատանքի պարագային միայն հնարաւոր է ունենալ երաշխաւորուած յաջողութիւններ:

Բ) Մէկ ազգի գաղափարի եւ 3այրենիք-Սփիւռք միասնութեան ամրագրում - Որպէս աշխարհասփիւռ ժողովուրդ՝ իսկապէս ունինք մրցակցային առաւելութիւններ, որոնք 33 իշխանութիւնները լաւապէս չեն արժեւորած անցեալին եւ չեն ալ գնահատեր այսօր: Ժամանակակից համաշխարհայինացման (գլոբալացիա) միջավայրին մէջ մենք ունինք մեր համեմատական մրցակցային առաւելութիւնները ազգովին լիարժեք օգտագործելու անհրաժեշտութիւն:

Ժամանակն է, որ որպէս համաշխարհային ազգ, կերտենք միաձոյլ հայկական աշխարհ՝ իր առանցքին մէջ ունենալով անկախ 3այաստանն ու Արցախը: Ջաւախահայութիւնը, հայապատկան հողերու վրայ ապրող մեր հայրենակիցները, դասական ու Նորաստեղծ Սփիւռքի հայութիւնը մէկ անբաժան միասնութիւն են մեր ազգային լինելիութիւնն ու պետականութեան գոյատեւումը ապահովող:

Ազգովին պարտինք համոզուիլ որ մենք վստահելու ենք միայն մեր հաւաքական ուժերուն վրայ, ոչ արեւելքէն, ոչ ալ արեւմուտքէն իմաստալի օժանդակութեան պատրանքներ սնուցանելով:

3այկական արեւելումով եւ մեր բազկի, մտքի եւ ձեռներեցութեան վրայ վստահելով միասնաբար պիտի կառուցենք մեր իտեալ պետութիւնն ու հայկական աշխարհը: Ազգովին պարտինք վերականգնել հաւատքը մեր ուժերու նկատմամբ, յաղթահարենք հիասթափութիւնները եւ դուռ բանանք Նոր յաղթանակներու համար:

Մեր ժողովուրդի միասնականութեան ամրապնդումը էական է մանաւանդ այս օրերուն, երբ Ռուսաստան-Արեւմուտք լուրջ ընդհարումը Ուկրանիոյ հարցով ստեղծած է համաշխարհային պայթուցիկ վտանգ կացութիւն, որ իր անդրադարձը կրնայ ունենալ հարաւային կովկասի տարածաշրջանին մէջ, թուրք-Ադրբեջանական ախորժակները առաւել սրելով 3այաստանի ու Արցախի նկատմամբ: Արդ՝ արելի քան երբեք պարտինք համախմբել մեր բոլոր ուժերը ի սպաս մեր հայրենիքին:



3այութեան առջեւ ծառայած մարտահրաւերներուն մենք ի գորու ենք դիմագրաւելու, եթէ առաջնորդուինք համահայկական օրակարգով, ըլլանք համախմբուած եւ գործենք միասնաբար: Մեր խոր հաւատքն է, որ յանձնառու եւ հայրենիքով տոգորուած Սփիւռքը լաւագոյն գրաւականն է հզօր ու ինքնավստահ հայրենիքի: Եւ փոխադարձաբար՝ իր Սփիւռքը իսկապէս արժեւորող 3այաստանը, Սփիւռքի նկատմամբ յատուկ գուրգուրանք ու հոգածութիւն տածող հայրենիքը լաւագոյն ազդակն է հայ ազգի գոյատեւման ու հայրենիքի ամրապնդման:

Գ) Որակապէս Նոր պետութեան անհրաժեշտութիւն - Աներկբայ իրողութիւն է, որ կը կայանան եւ յաջողութիւններ կ'ունենան այն պետութիւնները, որոնք ռազմավարական յստակ նպատակներ ճշդած են: Այս առումով մենք խնդիր ունինք: Փոքր, կենսական տարածքներէ գուրկ 3այաստանը հեռանկար չի կրնար ունենալ, եթէ որակապէս Նոր պետութիւն չստեղծուի՝ հիմնուած իր որդիներու մաքուր հայրենասիրութեան եւ անկախ հայրենիքը ամէն գնով պաշտպանելու, զարգացնելու աներեր պատրաստակամութեան վրայ:

Այո, մենք կ'ապրինք այնպիսի տարածաշրջանի մէջ, որ մշտապէս եղած է աշխարհի մեծերու շահերու բախման թատերաբեմ, ուր կազմակերպուած ըլլալը կենսական անհրաժեշտութիւն է: 3այաստանի մէջ ի վերջոյ պետք է հաստատուի արժանիների իշխանութիւն, որու հետեւանքով հնարաւոր կը դառնայ կառուցել մեր բոլորի պատկերացրած երկիրը՝ ազատ, արդար ու համերաշխ:

Մենք բաց ենք ամէն տեսակի արժանապատիւ եւ ազգանպաստ համագործակցութեան համար. չունինք որեւէ կաշկանդում եւ պատրաստ ենք երթալու մինչեւ վերջ: Պետականաշինութեան գործի Նոր սկիզբ դնելու հարց ունինք եւ այդ պարտինք ընել ճիշտ քայլերով - Նոր սխալներու, փորձութիւններու այլեւս ոչ ժամանակ ունինք եւ ոչ ալ համազգային մեծ ու անհատուած միջոցներ:

Դ) 3այոց բանակի եւ մեր ժողովուրդի մարտունակութեան վերականգնում - 3այոց բանակը բարոյալքուած վիճակի մէջ է այսօր եւ 33 կառավարութիւնը շարունակական փոփոխութեան կ'ենթարկէ անոր հրամանատարական ու սպայական կազմը:

Ամէն հալածանք ու անյարկի փոփոխութիւններ անյապաղ պետք է դադրին: Բանակը պարտի դառնալ համազգային գուրգուրանքի եւ հոգածութեան առարկայ: Մեր աշխարհագրական խիստ վտանգաւոր ու փխրուն պայմաններու մէջ հարկաւոր է զօրաւոր եւ ինքնավստահ բանակ, որ կարողանայ ատակօրէն պաշտպանել հայրենիքի սահմանները:

Ե) Անապահով խաւերու ընկերա-տնտեսական կացութեան բարելաւում - 3այաստանի ու Արցախի ժողովուրդի անապահով (ցածր-միջին, աղքատ, թռչակառու) խաւի թիւերը շարունակական աճ կ'արձանագրեն: Կառավարութեան կիզակէտը պարտի հանդիսանալ այդ խաւին ընկերա-տնտեսական վիճակի բարելաւումը, որպէսզի կենսամակարդակի Նուազագոյն ընդունելի սահմաններու հասնի անոր եկամուտը, մի քիչ ազատօրէն շնչելու հնարաւորութիւն ունենան այդ խաւի հայորդիները եւ չմտածեն արտագաղթելու մասին: 33 եւ Ա3 ԱՅՆերու 337 պատգամաւորները առաջնահերթութեամբ հետապնդելու են այս հարցը:

Սիրելի հայրենակիցներ, Մեր ժողովուրդի սպասումներն ու ակնկալիքները Դաշնակցութիւնէն միշտ մեծ են եղած՝ յատկապէս դժուար իրավիճակներու պարագային: Այսօր ալ այդպէս է: Նոյնիսկ գերազնահատուած սպասելիքներու պարագային երբեք յանձնառութեան պակաս չենք ունեցած: Այսօր ալ չունինք: Թէեւ քաջ գիտենք, որ մենք իսկ երբեք չենք բաւարարուիր արդիւնքներով:

Մեր Ընդհանուր Ժողովները լոկ ձեւական հաւաքներ չեն, այլ անկաշկանդ, մտածուած, բազմակողմանի եւ, ինչու չէ նաեւ, բուն քննարկումներու վայր: Այդ կը պարտադրէ մեր ներքին առողջ ժողովրդավարութիւնը եւ կարծիքներու անսանձ արտայայտութեան նուիրականացած իրաւունքը: Իսկ Ընդհանուր Ժողովներու բանաձեւերու կայացումէն ետք, այդ որոշումները իւրաքանչիւր Դաշնակցականի համար կը դառնան ամբողջովին իւրացուած ու գործադրելի յանձնառութիւն: Այդ կը պահանջէ մեր Դաշնակցականի կարգապահութիւնը եւ ուժականութիւնը: Այդ խոստումը կուտայ նաեւ իւրաքանչիւր դաշնակցական երբ կ'երդուի «իր պատուոյն եւ հայրենիքին վրայ» միշտ հաւատարիմ մնալ 3. 3. Դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին ու որոշումներուն եւ իր բոլոր ուժերով - իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքի գնով - ծառայել 3այաստանի եւ հայրութեան ազատագրութեան դատին»:



Բռնագավթված տարածքներում հայկական մշակութային ժառանգության պաշտպանության համար անհրաժեշտ քայլերը

Արցախյան հիմնահարցի հիմնարար դրդապատճառներից մեկը մշակութային ճնշումներն էին, որոնց Ադրբեջանում ենթարկվում էր հայությունը, նաեւ՝ Խորհրդային Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականությունը: Ազատագրելով մեր հայրենիքը, մենք 30 տարի անց բախվեցինք այդ նույն խնդրին, երբ խնդրո առարկա է ոչ միայն հայերի ապրելու իրավունքը Արցախում, այլ նաեւ հայկական մշակութային ժառանգության պահպանությունը, որն Ադրբեջանը կամ ձգտում է ոչնչացնել, կամ ծայրահեղ դեպքում փորձում է գրկել հայկական պատկանելիությունից: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Մշակութային ժառանգության պաշտպանության հանրային խորհրդի նախագահ Սերգեյ Շահվերդյանը: Նրա խոսքով, որոշ դեպքերում դա եկեղեցիների «ուղղափառացում» է, մյուս դեպքերում՝ հայկական մշակութային ժառանգության «աղվանացում», որոնց մասին ուղղակի հրահանգները տվել է Ադրբեջանի ղեկավարը: «Խորհրդային Միությունում հեշտ չէր այդպիսի գործողություններ կատարել, որովհետեւ կար վերադաս Մոսկվա, որը զսպիչ դեր էր կատարում. մեկ երկիր էր միասնական ղեկավարությամբ: Հիմա դա չկա», - նշում է նա:

«Վերջերս ակտիվացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի այցելության խնդիրը: Ադրբեջանը կարծես թե իր համաձայնությունը եւս տվել է, ու մենք պետք է պատրաստ լինենք այդ հեղինակավոր միջազգային կազմակերպության հետ փոխհարաբերություններին», - կարծում է հասարակական գործիչը: Սերգեյ Շահվերդյանը ցավով է նշում, որ այդ ուղղությամբ ամեն ինչ արված չէ. այսօր օրախնդիր է դարձել պետական տարբեր մարմինների համակարգված գործունեությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի այցելությանը պատրաստվելու եւ, առհասարակ, Ադրբեջանի հակահայ քաղաքականությանը մշակույթի առումով հակադրելու ուղղությամբ: Նա առանձնացնում է մի շարք հրատապ գործողություններ, որոնք պետք է իրականացնի պետությունը՝ հասարակության եւ մասնավոր հատվածի հետ համատեղ:

- Անհրաժեշտ է բռնագավթված տարածքներում մնացած հուշարձանների եւ արվեստի գործերի, թանգարանային հավաքածուների վերաբերյալ միասնական տեղեկատվական շտեմարան ստեղծել:

- Հենց ադրբեջանական աղբյուրները վանդալիզմի բազմաթիվ դեպքեր են հրապարակել: Դա վերաբերում է թե՛ եկեղեցիներին, թե՛ գերեզմաններին, թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմի նահատակների հիշատակին կառուցված հուշարձաններին, թե՛ Խորհրդային Միության հայազգի հերոսներին նվիրված հուշակոթողներին: Մեզ անհրաժեշտ է շտապ պատրաստել վանդալիզմի ենթարկված այդ հուշարձանների ցուցակները՝ լուսանկարներով, տեսաերկերով, եւ հրապարակել համապատասխան բրոշյուր:

- Մշակույթի եւ պատմության հուշարձանների վերաբերյալ կարիք կա միասնական վերջնական ցանկերի մշակման, որոնք պետք է լինեն նաեւ լուսանկարներով ուղեկցված, եւ յուրաքանչյուր պատմական հուշարձանի համար պետք է թղթածրարներ պատրաստել՝ օտար լեզուներով կարճ նկարագրություններով եւ լուսանկարներով, որոնք կարող են օգտագործվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի դաշտային առաքելություններին ներկայացնելու համար:

- Պետք է հիշեցնել, որ մենք բավականին մեծ աշխատանքներ ենք տարել իսլամական հուշարձանների պահպանման ուղղությամբ: Առանձին գրքույկներ, տեսաերկեր պետք է հրապարակել իսլամական հուշարձանների պահպանության ուղղությամբ մեր կատարած աշխատանքների վերաբերյալ:



Սերգեյ Շահվերդյանը նշում է, որ շատ հաճախ մեր ուշադրությունից դուրս են մնում օկուպացված տարածքներում մնացած թանգարանային եւ արվեստի հավաքածուները: «Մենք անհրաժեշտություն ունենք պատրաստելու թանգարանների եւ մասնավոր հավաքածուների մշակութային արժեքների ցանկերը, որոնք պետք է լինեն լուսանկարներով եւ մշակութային արժեքների փորձագիտական գնահատմամբ. չէ որ դրանք նաեւ նյութական արժեք ունեն: Պետք է յուրաքանչյուր թանգարանի եւ մասնավոր հավաքածուների վերաբերյալ հրատարակել պատկերազարդ բրոշյուրներ, տեսաերկեր ստեղծել, որոնց հիմք կարող են հանդիսանալ տարբեր տարիների՝ Արցախի հանրային հեռուստատեսության նկարահանումները: Ի վերջո, իրավական գործընթացներ սկսելու անհրաժեշտություն եւս կա, որովհետեւ դրանք կորել են: Պետք է քրեական գործեր հարուցել ու բռնագավթված տարածքներում մնացած արժեքների միջազգային հետախուզում հայտարարել, որպեսզի մշակութային արժեքների ապօրինի վաճառք տեղի չունենա», - գործողությունների հաջորդականությունը նշում է նա:

Մեր գրուցակցի խոսքով՝ անուշադրության է մատնվում օկուպացված տարածքներում մնացած եկեղեցական գույքը: Պետք է ամփոփել կորս-

ված եկեղեցական գույքի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ գորգեր, ծիսական գույք, սրբապատկերներ, ձեռագործ աշխատանքներ: Անհրաժեշտ է Արցախի հանրային հեռուստատեսության արխիվների հիման վրա ստեղծել տեսաերկերը, ցանկեր կազմել ու նաեւ այդ ուղղությամբ հրատարակել առանձին գրքույկներ: «Մի քիչ առանձին հարց է Շուշիի Ղազանչեցոց եւ Կանաչ ժամ եկեղեցիների խնդիրը, որոնց հայկականությունը խնդրո առարկա է դարձրել Ադրբեջանը՝ այն ներկայացնելով որպես ուղղափառ եկեղեցիներ», - նշում է Մշակութային ժառանգության պաշտպանության հանրային խորհրդի նախագահը՝ շեշտելով հայկական հուշարձանների աղվանացման դեմ պայքարի ռազմավարության մշակման կարելուությունը:

Է շարունակել մշակութային ժառանգության պահպանության բնագավառում միջազգային բոլոր համաձայնագրերին Արցախի միակողմանի միացումը: «Այդ գործընթացն սկսել ենք 2014թ., երկու կոնվենցիայի միացել ենք, այնուհետեւ գործընթացն ընդհատվել է», - ասում է Ս. Շահվերդյանը:

Սրանք են այն խնդիրների կարճ նկարագրությունը, որոնք մեր պետության առջեւ կանգնած են այսօր: «Այս գործընթացը մեկ պետական մարմնի գործառույթ չէ: Այս ծավալի աշխատանքը չի կարող այսօր գործող պետական համակարգն իրականացնել: Այդ ամենը կարելի է անել բացառապես պետական տարբեր մարմինների, մասնավոր անձանց եւ մասնագիտացված կազմակերպությունների գործողությունների համակարգման միջոցով», - համոզված է Մշակութային ժառանգության պաշտպանության հանրային խորհրդի նախագահը:

Որպես ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախկին նախարար՝ անդրադառնալով իսլամական հուշարձանների նկատմամբ վարվող պետական քաղաքականության մասին հարցին, Սերգեյ Շահվերդյանը նշում է, որ անհրաժեշտ է վերհանել թվերը, թե 30 տարվա ընթացքում որքան գումար ենք ծախսել քրիստոնեական եւ իսլամական հուշարձանների վերականգնման վրա: Եթե համեմատելու լինենք վերականգնման եթեթվա հայկական հուշարձանների քանակը իսլամական հուշարձանների քանակի հետ, կստացվի, որ իսլամական հուշարձաններին շատ ավելի ենք ուշադրություն դարձրել, քան հայկականին:

«Իսլամական մշակութային ժառանգությունը հայտարարել ենք Արցախի ժողովրդի սեփականություն եւ ամբողջ ժողովրդի ժառանգություն եւ, համապատասխանաբար, մեծ ուշադրություն էինք դարձնում այդ հարցերին: Օրինակ Շուշիի երեք մզկիթներից երկուսը վերականգնված են, ընդ որում՝ մեծ մզկիթի վերականգնումը երկու անգամ ենք արել. առաջին անգամ 2009թ. կոնսերվացման աշխատանքներ, իսկ 2015թ. հիմնովին վերականգնման աշխատանքներ ենք իրականացրել: 2008-2018թթ. մեծ աշխատանքներ էինք կատարում իսլամական հուշարձանների կոնսերվացման, մաքրման եւ պահպանման ուղղությամբ», - շեշտում է նա: Արել ենք այնքան, ինչքան թույլ են տվել պետական սուղ միջոցները: Մեր հակամարտության մեջ կրոնական էլեմենտ մտցնելու համար ադրբեջանցիները դա ներկայացնում են որպես իսլամական մշակութային հուշարձանների ոչնչացում:

Մեր խնդիրն է՝ ցույց տալ, որ մենք որեւէ ոչնչացման քայլեր չենք ձեռնարկել: Խաղաղ ժամանակ, կազմակերպված ձեռով որեւէ հուշարձան չի վնասվել: Որոշները վնասվել են պատերազմի ընթացքում, որոշները բնական մաշվածության են ենթարկվել, բայց սա ներկայացնել որպես միտումնավոր ոչնչացում՝ ճիշտ չէ:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Պետք է դիմանալ, լինել ուժեղ, համառ եւ, ամենակարեւորը, միասնական, քանի որ ընտրել ենք Արցախում ապրելը

Արցախում գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների, հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ որդեգրված աշխատանքների ուղղությունների մասին «Ապառաժ»-ի հարցերին պատասխանում է ԱՀ գյուղատնտեսության նորանշանակ նախարար Նորայր Մուսայեյանը:

- Պարոն Մուսայեյան, Դուք գյուղատնտեսության ոլորտում նոր մարդ չեք: Ինչքանով է Ձեր փորձն օգնելու նախարարության առջև ծառայած խնդիրները լուծելուն:

- Գյուղատնտեսության ոլորտում իմ փորձը ներառում է ամբողջ կյանքիս պատմությունը, իսկ գյուղատնտեսության նախարարությունում աշխատած վերջին 13 տարիներն օգնել են ինձ հասկանալու ոլորտի հիմնախնդիրները, հանգամանքները, որոնք խոչընդոտում են մեր հաջողությանը: Բնականաբար, բնագավառում երկար տարիների գործունեության արդյունքում ինձ մոտ ձեւավորվել է գյուղատնտեսության զարգացման սեփական տեսլականը: Այն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության եւ անասնաբուծության համաչափ զարգացումը:

Վերջին տարիներին այս ուղղությամբ արդեն իսկ կատարվել են մեծածավալ աշխատանքներ, որոնց արդյունքներն անհամեմատ ավելի ակնառու կլինեին, եթե չառերեսվեինք պատերազմի հետ:

Մեր նպատակն է՝ նախ վերականգնել պատերազմի աղետալի հետեւանքները: Անասնաբուծության ոլորտում դա գյուղատնտեսական կենդանիների որակական եւ քանակական հատկանիշների բարելավումն ու կայուն կերային բազայի ստեղծումն է, իսկ բուսաբուծության ոլորտում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք ու ամբողջական օգտագործումը, բարձրարժեք կուլտուրաների մշակությունը, ջերմոցային տնտեսությունների զարգացումը՝ հաշվի առնելով ունեցած սակավ հողային ռեսուրսները, ժամանակակից այգեգործությանը զարկ տալը: Համատեղ ուժերով կփորձենք առաջիկայում լուծել այս կարեւորագույն խնդիրները, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացումն ու ժամանակի ընթացքում պարենային ինքնաբավության խնդրի լուծումը:

- Գյուղատնտեսության ու Էկոնոմիկայի ճյուղերի միացումը բացատրվում էր օպտիմալացման անհրաժեշտությամբ, այժմ դրանք նորից առանձնացվել են: Ո՞րն է դրանք առանձնացնելու նպատակը:

- Որպես այդպիսին՝ կառավարության կառուցվածքային փոփոխության արդյունքում Էկոնոմիկայի մասի՝ գյուղատնտեսության նախարարությունից անջատմամբ օպտիմալացման սկզբունքը չի խախտվել, քանի որ Էկոնոմիկայի բլոկը նույն կազմով կցվել է ԱՀ ֆինանսների նախարարությանը:

Անջատման նպատակահարմարությունը թերեւս բխում է նշված ստորաբաժանման գործունեության արդյունավետության բարձրացումից:

- Ինչպե՞ս եք տեսնում Արցախում գյուղատնտեսության զարգացումը աղբյուրական սահմանների եւ ոռոգման ջրի սակավության պայմաններում:

- 44-օրյա պատերազմի հետեւանքով գյուղատնտեսության ոլորտը ամենաշատ տուժածներից է. կորսվել են հազարավոր հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողեր, մեծ քանակությամբ անասնազխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա եւ, ամենացավալին գյուղատնտեսության համար, գրեթե բոլոր ջրամբարները:



Դրանց գումարած, ռազմական գործողությունների դադարից առ այսօր մենք հաճախակի ենք ակնատես լինում թշնամու սահմաններին՝ գյուղաբնակ խաղաղ բնակչության ուղղությամբ կրակելուց մինչեւ դաշտում հողը մշակող գյուղացուն սպանելը:

Սրանք լուրջ մարտահրավերներ են ցանկացած արցախցու համար, քանի որ մենք մեր պապական հողերը մշակելու համար այս ժամանակահատվածում ստիպված ենք երբեմն կյանքով վճարել: Բայց պետք է դիմանալ, լինել ուժեղ, համառ եւ, ամենակարեւորը, միասնական, քանի որ ընտրել ենք Արցախում ապրելը:

Ոռոգման ջրի խնդրի մասին. թեպետ գիտենք, որ ոռոգման ջրի վերաբերյալ քաղաքականությունը մշակում եւ վարում է այլ կառույց, բայց պետք է նշեմ, որ ջրային ռեսուրսների անբավարարության հարցը գտնվում է Արցախի իշխանությունների սեւեռուն ուշադրության կենտրոնում:

Դիտարկվում են ոռոգման այլընտրանքային եղանակների ստեղծման բոլոր հնարավորությունները, արտեզյան հորերի քանակների եւ աշխարհագրության ընդլայնումը, մեր տիրապետության տակ գտնվող գետերի ջրերի ամբարման հնարավորությունները:

- Հետպատերազմյան նոր իրողություններով պայմանավորված՝ ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում գյուղատնտեսական ծրագրերի առումով:

- Առաջին հարցի շրջանակում արդեն խոսել ենք հետպատերազմյան Արցախի գյուղատնտեսության հիմնախնդիրների մասին:

Մեր ծրագրերն ուղղված են դրանց լուծմանը: Այժմ ընթացքի մեջ է բուսաբուծության եւ անասնաբուծության ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման եւ հաստատման գործընթացը: Հաստատվելուց հետո հանրությունը կիրառելի բոլոր ծրագրերի մասին, կիրառարկվեն դրանցից օգտվելու պայմանները, կմեկնարկի հայտերի ընդունման փուլը:

Փոփոխությունները ծրագրերի մեջ եական բնույթ չեն կրում: Այս փուլում մենք հետեւում ենք պատերազմից հետո որդեգրած քաղաքական գծին. դա պատերազմի հետեւանքների վերացումն է, ջերմատնային տնտեսությունների կառուցման եւ այգեգործության խթանումը եւ տեղական նախրի բարելավումը: Այս նպատակով կգործեն համապատասխան ծրագրեր եւ դրանցից բխող միջոցառումներ, ակտիվորեն կկիրարկվեն սուբսիդավորման մեխանիզմներ: Պարտաճանաչ եւ ոչ պարտաճանաչ շահառուների դասակարգման ու այլ զսպող մեխանիզմների կիրառման միջոցով կապահովվի պետական ֆինանսական միջոցների նպատակային ծախսումը:

- Խոսվում է ցանկապատված տարածքներում անասնապահության եւ ջերմոցային տնտեսությունների զարգացման մասին: Ձեր կարծիքով՝ հնարավոր է լրիվությամբ անցում կատարել դրանց:

- Ցանկապատված տարածքներում անասնապահության իրականացումը նպատակահարմար է կազմակերպել սահմանամերձ տարածքներում՝ կանխելով կենդանիների անցումը թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածք:



Ջերմոցային տնտեսությունների հիմնումը բխում է պատերազմի հետեւանքով գյուղատնտեսական նշանակության հողերի թվի կտրուկ կրճատմամբ: Մենք ստիպված ենք փոքր հողակտորներից ստանալ կրկնակի քանակությամբ բերք, ինչը հնարավոր է ջերմոցային տնտեսությունների հիմնմամբ եւ այդ մշակույթի զարգացմամբ:

- Տարիներ շարունակ Արցախում, պետական որեւէ ծրագրով պայմանավորված, մարդիկ տարբերայնորեն այս կամ այն մշակաբույսն էին մշակում՝ առանց բնակլիմայական եւ այլ պայմանները հաշվի առնելու: Հիմա էլ շատերը միայն պետական աջակցությունից օգտվելու համար ջերմոցներ են կառուցում: Չե՞ք կարծում, որ առանց վերահսկողության տրվող այդ գումարները մսխվում են: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այս ոլորտի վերահսկման, մասնագիտական մոտեցման ապահովման ուղղությամբ:

- Արդեն ասել եմ, որ ջերմոցային տնտեսությունների կառուցման խթանումը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսական նշանակության հողերի կրճատմամբ. այսօր մեզ պետք է փոքր միավոր հողակտորից մեծ քանակությամբ բերք ստանալ:

Ինչ վերաբերում է պետական միջոցների մսխմանը, ապա դա այնքան էլ այդպես չէ: Ջերմոցային տնտեսությունների հիմնման ծրագիրը մեկնարկել է միայն 2021 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Այդ կարճ ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում հիմնվել են, ընդհանուր առմամբ, 26400 քմ ջերմոցային տնտեսություններ, որից ավանդական՝ 24040 քմ եւ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված՝ 2360 քմ: Հատկանշական է, որ մինչ այդ ծրագրի մեկնարկը գործող ջերմոցային տնտեսությունների արտադրական մակերեսը կազմում էր 48000 քմ (ավանդական եղանակով): Այսինքն, 2 ամսվա ընթացքում կտրուկ աճել է ջերմատնային տնտեսությունների քանակն ու որակը:

Վերահսկողության պահով՝ պետք է նշեմ, որ պետական միջոցները հայտատուներին փոխհատուցվում են միայն ջերմոցային տնտեսության կառուցումից եւ նախարարության մասնագետների կողմից ծրագրի պահանջներին համապատասխանությունը ստուգելուց հետո: Հատուցվում է՝ ավանդական եղանակով կառուցված ջերմոցային տնտեսության դեպքում՝ 1 քմ դիմաց 8000 դրամ, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված ջերմոցային տնտեսության դեպքում՝ 1 քմ դիմաց 22000 դրամ: Նախքան ջերմոցի կառուցումը եւ շահագործման ողջ ընթացքում քաղա-

քացիները կարող են մեր մասնագետներից ստանալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն: Պետք է նշեմ նաեւ, որ ծրագրով սահմանված է, որ պետական ծրագրից օգտված հայտատուն պարտավոր է 3 տարի ժամկետով շահագործել ջերմոցը:

Հարցազրույցը՝ Տարեհիկ ԱՂԱՉԱՆՅԱՆի

Մեր ուժը մեր կամքն է. Հարութ Բանոյան



«Եթե թշնամին մտածի մեզ հարված հասցնել, առաջին մայրը թող լինի իմ մայրը, որ սեւ կհագնի, քան թե սեւ հագնեն հայ ազգի բոլոր մայրերը»: Խոսքերի հեղինակը Հարություն Բանոյանն է: Նա արցախյան 44-օրյա պատերազմի անմահ հերոսներից է: Դաշնակցական Նվիրյալի համար հայրենասիրությունը ոչ թե լոկ խոսքերով էր սահմանափակվում, այլ լուռ ու անխոջ գործով:

Հարութը, ով անցնելով սիրիական պատերազմի բովով, կազմակերպեց Հալեպի հայաշատ թաղամասերի ինքնապաշտպանությունը, իսկ ապա վիրավոր Արցախի կանչով Հայաստան եկավ, եւ ընկերների՝ Մոսիկ Սեբեմյանի, Հակոբ Ասթարճյանի եւ Ջորջ Քրդանյանի հետ օրհասական պահին մեկնեց Շուշի:

Հարութի կյանքի առաքելությունը հայրենիքին Նվիրվելն ու հայրության պաշտպանությունն էր: Նա վստահ էր, որ հայրենիքը աստվածատուր պարգև է տրված մեզ, որի պաշտպանությունը հայ մարդու համար պատվաբեր ու սրբազան գործ է:

Հալեպում ստանձնելով հայկական թաղամասերի պաշտպանության գործը, իր մտքում մշտապես Արցախն ու Հայաստանն էին, նրանց պաշտպանության ու անվտանգության ապահովման խնդիրները:

2016թ. քառօրյա պատերազմից Հարութ Բանոյանը համագործակցում էր Նաեւ ՀՀ ՇՈՒ-ի հետ, նախագծում եւ պատրաստում էր հրթիռներ, հարվածային զինտեխնիկա, որոնք կիրառվեցին վերջին պատերազմում:

Մարտական ընկերներից Մոսիկ Սեբեմյանը ծնվել է 1992-ին, Հակոբ Ասթարճյանը՝ 1991-ին. իսկ Հարութը՝ 1976-ին, Հալեպում: Մոսիկը մասնագիտացված էր օդորակիչների, Հակոբը՝ էլեկտրոնային եւ համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում: Հարութը, որ ռազմական գործի հզոր գիտակ էր, իր ռազմական ունակությունները ձեռք է բերել իր ավագ ընկերներից, բայց իր գիտելիքների եւ ընդունակությունների մեծ մասը նա ձեռք է բերել ինքնակրթությամբ:

Նրանց կատարած ազգանվեր աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է նրանց ընկեր Ջորջ Քրդանյանի հետ:

Ջորջի խոսքով՝ Հարութ Բանոյանին ճանաչել են սիրիական պատերազմի ընթացքում, որն սկսվել էր 2011-ին:

«Մտերմացանք ընկերոջ հետ, ինքն էլ մեզ մարզեց, զինեց ռազմական գիտելիքներով», - ասում է նա:

Հարութը կամավորներին բաժանել էր ջոկատներ, որոնցից յուրաքանչյուրը Հալեպի մի շրջանի ինքնապաշտպանություն պետք է ապահովեր, իսկ ինքն էլ ընդհանուր հրամանատարությունն էր ստանձնել, երբ հրամանատար Ռաֆֆի Պլազադյանը զոհվել էր ռումբի պայթյունից:

«Որտեղ որ ռումբ էր ընկնում կամ ավերածություն էր լինում, մենք անմիջապես հասնում էինք դեպքի վայր, որպեսզի այստեղի բանակը չթալաներ հայկական տները», - ասում է նա:

Ջորջի խոսքով՝ Հարութը իր աշխատանքներն է ծավալել Հալեպի այլ հայաշատ քաղաքներում եւս: Հենց նրա շնորհիվ է, որ Սիրիայի հյուսիսում կանգուն են մնացել բազմաթիվ հայաբնակ շրջաններ:

Հարութն այն աստիճանի ռազմական պատրաստվածության էր հասցրել կամավորական ջոկատներին, որ այդ ջոկատները ոչ միայն բավարարվում էին միայն ինքնապաշտպանությամբ, այլեւ կարողանում էին թշնամուն տալ արժանի հակահարված:

Ջորջը, հիշելով պատերազմի ամբողջ ընթացքը, նշեց՝ 2016-ին, պատերազմի ավարտից 2 ամիս առաջ, երբ Սիրիական բանակի ազատագրական հարձակումներն էին սկսել Հալեպում, մաս էին կազմում Նաեւ հայ կամավորական ջոկատները՝ օգտակար դառնալով սիրիական ջոկատին:

Հարութը ջանք ու եռանդ էր խնայում՝ հայ երիտասարդներին փոխանցելու իր ռազմական գիտելիքներն ու փորձը՝ ինքնապաշտպանություն եւ հարձակում կազմակերպելու, դիրքերի ամրաշինական աշխատանքները կազմակերպելու, առանց ջրի ու սննդի դիմանալու մասին:

Երբ սկսվեց Արցախյան 44-օրյա պատերազմը, Ջորջը եւ մի քանի այլ ընկերներ պատրաստակամություն հայտնեցին որպես կամավորներ մեկնելու Արցախ, եւ այդպես էլ արեցին: 3 ընկերները՝ Ջորջը, Հակոբն ու Մոսիկը Հարութ Բանոյանի գլխավորությամբ մեկնեցին հայրենիք:

«Հարութի համար հայրենիքն ու հայությունը ամեն ինչից վեր էին: Միշտ մեզ ասում էր, որ եթե Սիրիայում անգամ մի հայ մնա, մենք պետք է մնանք ու պաշտպանեց իրեն, եւ չպետք է լքեց Սիրիան, մինչեւ որ ամբողջությամբ չհայաթափվի այն: Բարեբախտաբար, այդպես չեղավ: Արցախի պատերազմի պարագայում էլ՝ Հարութը վստահ էր, որ մեզնից որակյալ պատասխան կստանար հայրենիքի պաշտպանության գործին մասնակցելու համար: Այդպես էլ եղավ», - ասում է Ջորջը:

«Մենք մեկնեցինք՝ պատրաստ նահատակվելու հանուն հայրենիքի: Մեկնեցինք, որպեսզի մեր գիտելիքներն ու ծառայությունները մատուցենք մեր ժողովրդին ու մեր հայրենիքին: Երբ արդեն Հայաստանում էինք, սկսեցինք ամեն տեսակի աշխատանքներ իրականացնել թե՛ ՀՀ-ի կազմում, թե՛ բանակի կազմում», - ընդգծում է նա:

Նրա խոսքով՝ հայ զինվորները մեծ ոգեւորությամբ ընդունեցին իրենց ներկայությունը եւ ուշադրությամբ ընկալում էին այն գիտելիքները, որ իրենք էին նրանց փոխանցում: Հրամանատարական կազմն էլ շատ անգամ ապշում էր Հարութ Բանոյանի ռազմական հմտությունների վրա:

Հայաստանում նրանք մարզում էին առաջնագիծ մեկնող զինվորներին ու կամավորներին:

«Հարութ Բանոյանը՝ 2 տարի էր, ինչ պարբերաբար ժամանում էր Հայաստան եւ իր գիտելիքները փոխանցում հայ զինվորներին», - նշում է Ջորջը:

Երբ որ սկսվեցին Շուշիի համար մարտերը, չկարողանալով թիկունքում մնալ՝ հոկտեմբերի 28-ին Հակոբն ու Մոսիկը Հարութ Բանոյանի հետ միասին անմիջապես շտապեցին Արցախ՝ Շուշիի պաշտպանության գործին մասնակցելու համար:

«Հայրենիքը մեզ համար կամ մեր գերեզմանն է լինելու, կամ թշնամու», - ասել էր հրամանատար Հարութը

ու հայրենի հողը գերեզման դարձրել թշնամու հարյուրավոր զինվորների համար, սակայն, ցավոք, ինքն էլ իր մարտական ընկերների հետ անմահացավ Շուշիի պաշտպանության ժամանակ՝ Նոյեմբերի 5-ին, իր կյանքը Նվիրելով ամենաթանկին՝ հայրենիքին:

Հայրենիքին մատուցած ծառայության համար Հարութն արժանացել է ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի:

Ջ. Քրդանյանն ընդգծում է հատկապես այն փաստը, որ ՀՀ-ն այն եզակի կառույցներից է, որտեղ գործը երբեք կիսատ չի մնում:

«Մեր հիմնադիրների գործն առ այսօր շարունակվում է, ընկեր Ռաֆֆի Պլազադյանի գործը ընկեր Հարութը շարունակեց, ուրեմն ընկեր Հարութի գործն էլ՝ կգտնվեն ընկերներ, ովքեր կշարունակեն», - վստահ է Ջորջը:

Նա նկատում է, որ պատերազմի դաշտում չկար փոխհամաձայնեցված գործողություններ, անկազմակերպվածություն էր տիրում, եւ հայկական զորաջոկատները չգիտեին՝ իրենց դիմաց կամ կողքին հայեր են, թե թուրքեր:

«Պատերազմի ընթացքում մենք ոչ թե մարդուժի պակաս ունեինք, այլ տեխնոլոգիաների, որովհետեւ սա տեխնիկայի պատերազմ էր: Ամեն օր 5-6 ավտոբուս մարդ էր մեկնում Արցախ, սակայն սա մեզ համար փրկություն էր կարող լինել», - ասում է Ջորջը:

Ըստ նրա, երբ մենք ամեն օր ինչ-որ շրջան էինք կորցնում, Հարութ Բանոյանն արդեն կանխատեսում էր, որ այդպես պետք է լինի: Նրա համար շատ հստակ էր, որ մենք դեպի հաղթանակ չենք գնում, եւ համոզված էր, որ պետք է նահատակվեն:

Ջորջի խոսքով՝ ստեղծված պարագայում մեզ համար առաջնահերթը ինքներս մեզ զորացնելն է, հատկապես՝ տեխնիկապես հագեցվածության առումով:

«Մենք բոլորս ՀՀ Դաշնակցության զինվորներն ենք, եւ հպարտ ենք, որ ընկեր Հարութ Բանոյանի նման հրամանատար ենք ունեցել», - եզրափակում է Ջորջը:

«Որքան էլ որ իրենք կարծեն, որ ուժեղ են, կամ՝ մեզանից շատ ավելին ունեն, եւ կարծում են, որ մեր ունեցած ուժը մեր կամքն է. կամքը, հավատքը՝ առ Աստված, հայրենիքն ու հայ ժողովուրդը»: Հարութ Բանոյանի այս խոսքերն այսօր Սիրիայի երիտասարդական միության խորհրդանիշն է եւ ուղեցույցը հայրենիքի համար Նվիրումի պատրաստ ու ազգային գաղափարական ոգով սերունդներ պատրաստելու համար:

Հրամանատար Հարութ Բանոյանն իր գործով ապացուցեց, որ հայրենիքն է այն գերագույն արժեքը, այն սրբազան Նշխարիքը, որ ամեն մի հայ պետք է կրի իր մեջ: Նա դարձավ հայրենիքի իսկական Նվիրյալ զավակն ու շատ-շատերի համար իդեալ՝ հայ մարդու, համարձակ զինվորականի, քաջարի մարտիկի ու հմուտ հրամանատարի: Նա զենքը ձեռքին մինչեւ վերջին շունչը պայքարեց հայրենի հողի պաշտպանության համար եւ զենքը ձեռքին էլ մարտիրոսվեց:

Փառք ու պատիվ քաջարի հրամանատարին ու իր զինակից բոլոր ընկերներին: Ձեր սիրանքն անմար է, գործը՝ շարունակական:

Վրեժը հայի հոգում երբեք չի՛ մարելու

Փետրվարի 26-ին ՅՅԴ Արցախի երիտասարդական միությունը Ստեփանակերտի Եղբայրական հուշահամալիրում ոգեկոչել է սումգայիթյան զոհերի հիշատակը:

Հիշատակի միջոցառմանը ելույթ է ունեցել ՅՅԴ Արցախի երիտասարդական միության անդամ Ալյոնա Յակոբյանը, ով միության անունից դատապարտել է միջազգային հանրության հանցավոր լռությունը: Անպատժելիության արդյունքում հետագայում ոճրագործի ձեռքով կատարվեցին ավելի դաժան գործողություններ:

«Արցախյան վերջին պատերազմը նրանց դիվային ծրագրի շարունակությունն էր: Զառասուռչորս օր շարունակ հայ զինվորը անձնագոհությամբ պայքարեց, քառասունչորս օր շարունակ մենք տոկացինք, սակայն անհավասար պայքարում, նաեւ աշխարհաքաղաքական մեծ խաղերի արդյունքում դավադրաբար սկսված պատերազմում պարտվեցինք՝ ունենալով նոր զոհեր, թանկ ու անդառնալի կորուստներ»,- ասել է Ա. Յակոբյանը:

Ոգեկոչելով սումգայիթյան զոհերի հիշատակը՝ ներկաները միաժամանակ նաեւ ոգեկոչել են արցախյան պայքարի բոլոր

նահատակների հիշատակը:

«Մենք չե՛նք հանձնվելու: Վրեժը հայի հոգում երբեք չի՛ մարելու: Մենք ապրելու ենք՝ ի հեճուկս չարի»,- վստահեցրել են երիտասարդները:

Դաշնակցական Արծիվ Լալայանն էլ նշեց, որ 44-օրյա պատերազմը շարունակությունն էր Ադրբեջանի եղեռնական մտադրությունների, որ սկիզբ էր առել սումգայիթյան ջարդերից:

«Այսօր էլ թշնամին փորձում է Խրամորթում ահաբեկել բնակչությանը, կրկին սպառնում է ուժ կիրառել խաղաղ բնակչության նկատմամբ, բռնի տեղահանել նրանց, ինչպես դա անում էր 34 տարի առաջ: Սա հուշում է բոլորին, որ սին են բոլոր խաղաղասիրական թեգերը, եւ որ թշնամին չի հրաժարվել իր ցեղասպան քաղաքականությունից»,- նշել է Ա. Լալայանը:

«Ոգեկոչման այս արարողության նմանությամբ աշխարհի շատ երկրներում, որտեղ Դաշնակցությունը ներկայացված է, եւս կազմակերպվելու են հիշատակի արարողություններ: Այն առաջին հերթին ուղղված է միջազգային հանրության լռության դեմ»,- ելույթի իր խոսքում նշել է ՅՅԴ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանը:



Ալյոնա Գրիգորյանը հիշեցրեց բոլորին, որ ամենամեծ հանցանքը լռությունն է:

ՅՅԴ Կանադայի երիտասարդական միության «Արշավիր Շիրակյան» մասնաճյուղի նախաձեռնությամբ փետրվարի 26-ին Կանադայի հանրային ռադիոկայանի Վանկուվեր կենտրոնի դիմաց տեղի է ունեցել բողոքի հավաք՝ 34 տարի առաջ տեղի ունեցած Սումգայիթյան ջարդերի կա-

պակցությամբ:

Վաշինգտոնում եւս, ՅՅԴ Արեւելյան Ամերիկայի երիտասարդական միության նախաձեռնությամբ Ադրբեջանական դեսպանատան դիմաց տեղի է ունեցել բողոքի ակցիա, որի մասնակիցները պահանջել են արդարության վերականգնում եւ սումգայիթյան ջարդերի դատապարտում:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ զինվորը՝ ՅՅԴ ԱԵՄ-ի ուշադրության կենտրոնում



Արցախյան շարժման 34-ամյակի եւ Անդրանիկ Օզանյանի ծննդյան 157-ամյակի առթիվ ՅՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ ԱԶ ՊԲ զորամասերից մեկում զինվորների համար կազմակերպվել է ինտելեկտուալ-խաղ մրցույթ, իսկ ավարտին՝ նաեւ համերգային ծրագիր, որտեղ ելույթ է ունեցել Արցախի «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթը:

ՅՅԴ ԱԵՄ-ի, Հայ օգնության միության Արցախի միավորի, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի եւ «Արցախֆոնը»-ի միջոցներով դիրքերում գտնվող զինվորների համար պատրաստվել են քաղցրավենիքի եւ տաք հագուստի կապոցներ:

Ծրագրի մեկնարկին մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների հիշատակը, որից հետո ՅՅԴ ԱԵՄ-ի ներկայացուցիչ Վահագն Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց զինծառայողներին իրենց անձնվեր ծառայության համար, ինչպես նաեւ ԱԶ ՊԲ հրամկազմին՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Նա իր խոսքում նշեց, որ այսօր մենք խնդիր ունենք մեր ունեցածը կրկին արժեւորելու եւ ապագայի հանդեպ հավատով լցվելու:

«Մենք կարելու ենք մեր հերոսների հիշատակը վառ պահելը, ովքեր ոգեշնչման աղբյուր են հանդիսացել Արցախյան ազատագրական շարժման օրերին, եւ այսօր էլ ստեղծված պայմաններում նրանք մեր նորօրյա հերոսների հետ միասին պետք է դառնան դաստիարակ-

րից, մեր բանակը մեզ համար բացարձակ արժեք է, եւ մենք շարունակում ենք առաջվա պես հավատալ ու վստահել մեր բանակին, ապավինել նրանց բազկի ուժին»,- ասել է Ա. Հակոբյանը:

ՅՅԴ ԱԵՄ-ի անդամ Բեն Բաբայանն էլ նշեց, որ ՅՅԴ ԱԵՄ-ը հաճախակի էր կազմակերպում նման միջոցառումներ, սակայն պատերազմից հետո սա նմանատիպ առաջին միջոցառումն է:

«Մենք հաճախակի էինք նմանատիպ միջոցառումներ կազմակերպում, որի նպատակը բանակ-հասարակություն կապի ամրապնդելն էր, զինծառայողներին ոգեւորելը, նրանց գիտելիքների հարստացումը: Այսօր, սակայն, ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ծրագիրը մի քիչ այլ ուղղվածություն է ձեռք բերել, այն առումով, որ չպետք է թույլ տանք, որպեսզի մեր բանակի հանդեպ անվստահություն առաջանա կրած պարտությունից հետո, որովհետեւ մենք բոլորս վստահ ենք,

որ սա մեր բանակի պարտությունը չէր»,- ասել է Բ. Բաբայանը:

Կրտսեր սերժանտ Հրանտ Սահակյանը, ով արդեն 19-ամսվա ծառայող է, «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ իր ծառայության ընթացքում սա առաջին դեպքն էր, որ հասարակական կազմակերպությունը զինվորների հետ նման միջոցառում է անցկացնում:

«Կարելի էր նաեւ գնահատում նման միջոցառումների անցկացումը, քանի որ պատերազմն ավարտվել է, սակայն զինվորները շարունակում են մսւլ ծառայության մեջ, ուստի կարելի է կապը պահպանել քաղաքացիական կյանքի հետ: Այսպիսի միջոցառումները մշտապես ուրախությամբ են ընդունվում զինվորների կողմից: Նրանք շփվում են նոր մարդկանց հետ իրենց համար տարբերվող ձեւաչափով, իրար հետ մրցակցում են: Թե ինչքանով էր նրանց համար հաճելի ընթացքը խաղը, կարող է փաստել նրանց խանդավառությունը, որին ակախատես եղաք ինքներդ»,- ասել է Հ. Սահակյանը:

Այսօր, առավել քան երբեք, պետք է ուշադրության կենտրոնում լինի հայ զինվորը, որովհետեւ նրա հզորությամբ ու մարտունակությամբ է կանխորոշվելու մեր ապագան, նրա ձեռքբերումներն են, որ կարող են ոգեւորել ժողովրդին եւ վերականգնել հավատը վաղվա



Օրվա հանդեպ: Հայոց բանակը թեեւ վիրավոր, սակայն շարունակում է վստահորեն իրականացնել մեր սահմանների պաշտպանությունը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խրամորթ. Ազերիների մուղամներն ու հեռանալու կոչերը

ԱՅ Ասկերան շրջկենտրոնից 6կմ, իսկ Ստեփանակերտից 21 կմ հեռավորության վրա, Ակնայի անմիջական հարեանությունը է գտնվում Խրամորթ գյուղը:

Գյուղ մտնելուն պես աչքի են գարնվում գյուղի ավերակները, որոնք վկայում են, որ վաղ անցյալում այստեղով է

գործությամբ ու հողագործությամբ, որը շատ գյուղացիների համար ապրուստի հիմնական միջոց է, սակայն թշնամուն լավ ճանաչողներն իհարկե գիտեին, որ դա հնարավոր չէր լինելու:

Եթե պատերազմից հետո ռուս խաղաղապահների ներկայությամբ գյուղացիները կարողացել են աշխատել իրենց այ-

ծելով, որ իշխանության ներկայացուցիչներն են եկել իրենց հետ հանդիպելու: Տեսնելով մեզ, ահաբեկված գյուղացիները հարցնում էին՝ արդյո՞ք այդ հայտարարությունները ճիշտ էին, թե՞ ոչ:

«Ապառաժ»-ի հետ զրույցում գյուղացիները նշեցին, որ այստեղից գնալու տեղ չունեն, ո՞ր գնան: «90-ականներին երեխայիս հետ դուրս եմ եկել, 2020-ին երեխաս է թռններիս հետ դուրս եկել, հիմա ո՞ր գնանք»,- ասել է գյուղացիներից մեկը:

Մի այլ բնակիչ էլ նշեց, որ 3 անգամ այս գյուղում տուն է կառուցել:

Դպրոցի կազմակերպիչ Հասմիկ Անդրյանը նշեց, որ դասի էին, երբ գյուղացիներից մեկը գանգեց՝ հարցնելու համար, թե ի՞նչ հայտարարություն է տարածվում Ադրբեջանի Հանրապետության տարածքը լքելու մասին: «Մենք չէինք լսել, ուստի ասացի, որ տեղյակ չեմ: 15 ր-ից կրկին գանգեց, ու ասաց, որ հիմա նորից հայտարարություն է տարածվում, դուրս գամ ու լսեմ: 11-րդ դասարանի տղաներից մեկին ուղարկեցի բակ՝ լսելու, թե ինչ հայտարարություն է տարածվում: Տղան վերադարձավ՝ ասելով, որ ամեն ինչ նորմալ է, որպեսզի խուճապի չմատնվենք: 3-րդ անգամ երբ գանգ եկավ, արդեն ես դուրս եկա, տեսա, որ մեքենան կանգնեցրած՝ բարձրախոսներով մաքուր հայերենով հայտարարություն են տարածում», - ասել է Հ. Անդրյանը:

Նրա խոսքով՝ շարունակել են դասապրոցեցը առանց խուճապի մատնվելու:

Անորոշ իրավիճակում գյուղացիները չեն կարողանում որեւէ աշխատանք կատարել: Տղամարդիկ հորդորում են կանանց չվախենալ, իսկ կանայք էլ պատասխանում են, որ թուրքից չեն վախենում, այլ նորագույն զենքերից, որ հեռվից անգամ կարող են հարվածել:

Գյուղի բնակչուհի Անժելա Ղահրամանյանը չի պատկերացնում իր կյանքն ուրիշ տեղ է մինչեւ պատերազմը չէր էլ պատկերացնում, որ այսպիսի իրավիճակում կհայտնվեին. հավատում էր «հաղթելու ենք» կարգախոսին եւ մինչ պատերազմի վերջին օրը չի լքել Արցախը:

Փետրվարյան այս օրերի հետ զուգահեռ կարող ենք ասել, որ հեռավոր սահմաններն ու բռնի տեղա-

հանման սպառնալիքները հիշեցնում են 1988թ. սուվագայի օրերը:

Գյուղացիները բողոքում են, որ դաշտերում զբաղվում են բանվորությամբ, սակայն արդեն ինչքան ժամանակ է՝ նույնիսկ ռուսների ներկայությամբ չեն թողնում աշխատեն եւ վաստակեն իրենց օրվա գումարը:

Մեր այցից հետո սադրանքները չեն դադարել, ավելին՝ սկսել են միացնել եւ հնչեցնել իրենց մուղամները:

Փետրվարի 26-ին Խրամորթ են այցելել ԱՀ ոստիկանության Ասկերանի շրջանային բաժնի ծառայողները, ռուսական խաղաղապահ առաքելության պատասխանատուները, ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանն ու աշխատակազմի ներկայացուցիչները:


«Գյուղի բնակչությանն ահաբեկելու արդեջանական հերթական գործողություններն իրականացվում են հատուկ պլանավորված եւ արդեջանական դեկավարության ուղիղ համակարգմամբ: Դրանք Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի հոգեբանական անձեռնմխելիության դեմ ուղղված գործողություններ են, ինչի մասին է վկայում նաեւ այն համագամանքը, որ այսպես կոչված «կոչերն ու հորդորները» տեսածայնագրվել ու սոցիալական ցանցերում տարածվել են 44-օրյա պատերազմի օրերին եւ դրանից հետո՝ արդեջանական քարոզչություն իրականացնող ալիքներով:

Կոչերի բովանդակությունից պարզ երևում է, որ արդեջանական կողմն ուժի կիրառման սպառնալիք է հնչեցնում Խրամորթ համայնքի խաղաղ բնակիչների նկատմամբ՝ նպատակ ունենալով գրկել նրանց սեփական հայրենիքից, խաղաղ ու անվտանգ ապրելու, արժանապատիվ աշխատանքով բնականոն կյանք վարելու իրավունքից»,- փաստում է ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը:

Փետրվարի 27-ին ԱՀ ՆԳՆ հասարակայնության հետ կապի եւ լրատվության ծառայության հաղորդմամբ՝ խաղաղապահները վստահեցրել են, որ խնդիրը կլուծվի առաջիկա 2-3 օրերի ընթացքում:

Սրանք արդեջանական հերթական սպառնալիքներն են, որով նրանք նպատակ ունեն խուճապ տարածել հայերի շրջանում:

Հասիկ ԿԱՉԱՏՐՅԱՆ



անցել եւ իր անջնջելի հետքը թողել պատերազմը: Նախքան 44-օրյա պատերազմը գյուղն Արցախի այն եզակի գյուղերից էր, որտեղ խնդիրներ քիչ կային, սակայն այսօր պատկերն ընդհանրապես այլ է:

2020 թ. նոյեմբերի 9-ին կնքված խաղաղության պայմանագրով երբ Ակնան դավադիր ստորագրությամբ հանձնվեց թշնամուն, Խրամորթը հայտնվեց թշնամու դիրքերից 600-800մ հեռավորության վրա, թեեւ սահմանամերձ լինելու հանգամանքը խոչընդոտ չդարձավ, որ պատերազմից հետո իր հողին ամուռ կառուցած խրամորթից վերադառնա եւ շարունակի ապրել իր տանը: Բացի խրամորթից, գյուղում են հաստատվել նաեւ տեղահանված 11 ընտանիք:

Թվում էր, թե խաղաղասիրության եւ բարեկամության կոչերից հետո բնակիչներն այսուհետ պետք է կարողանային խաղաղ ապրել ու արարել, զբաղվել կենցաղային աշխատանքներով, այգե-

գիններում, ապա այսօր նույնիսկ նրանց ներկայությունը չի գույում թշնամուն, ով պարզապես արգելում է գյուղացիներին աշխատել իրենց այգիներում: Բացի այդ, մերթընդմերթ լսվում են նաեւ կրակոցներ:

Թշնամու կողմից այսպիսով սադրանքները չեն ավարտվել: Փետրվարի 24-ին 10:00-11:00 ընկած ժամանակահատվածում գյուղի մոտ տեղակայված արդեջանցիները բարձրախոսներով փորձել են ահաբեկել բնակիչներին:

Ահագանգին առաջին արձագանքել է «Ապառաժ»-ը եւ ահագանգի հետքերով այցելել Խրամորթ, որտեղ բնակիչները տեղեկացրել են, որ արդեջանցիները բարձրախոսներով հայերեն հայտարարություններ են արել՝ ասելով՝ լքեք մեր տարածքները, խաղաղ ճանապարհով հեռացեք, այլապես ուժի կդիմենք եւ այլև:

Գյուղացիներն անձանոթ մեքենա տեսնելով՝ դուրս էին եկել տներից՝ մտա-

Քիրս գինու յուրահատուկ համի գաղտնիքը

Արցախում արտադրվող ու մեծ պահանջարկ վայելող գինիներից մեկը՝ Քիրսը, կրում է Արցախի պայքարի ու միասնության խորհրդանշիչ Քիրս լեռան անունը: Մեծ Քիրսը Արցախի լեռնաշղթայի հարավային ճյուղի բարձր գագաթներից է, ունի 2724 մ բարձրություն, լեռնագագաթը սեղմված բռունցքի տեսք ունի եւ խորհրդանշում է արցախյան բռունցքը, պայքարը: Այն պատկերված է նաեւ Արցախի գինանշանի վրա:

Հենց պայքարի, մաքառման գաղափարն է դարձել 2019 թվականից գինու սիրահարներին ներկայացող «Քիրս» ապրանքանիշի յուրօրինակ դիզայնի ու համի ոգեշնչման աղբյուրը:

«Ապառաժ»-ի հետ զրույցում «Քիրս» ՓԲԸ տնօրեն Անդրանիկ Սարգսյանը նշել է, որ գործարանը ձեռք բերելուց հետո այն ամբողջովին վերափոխել ու արդիականացրել է: «Խոշոր ներդրումներ են արվել, բոլոր սարքավորումները բերվել են Իտալիայից, որի շնորհիվ մի քանի անգամ բարձրացել է արտադրողականությունը: Այսպիսի սարքավորումներով կարող ես շատ լավ գինի պատրաստել: Մասնագետը սարքավորումներին ծանոթանալուց հետո համոզված է լինում, որ որակյալ գինի ենք արտադրում», - նշում է տնօրենը:

Տարեկան արտադրում են 100 000 շիշ գինի: 2019թ. երեք տեսակի արտադրանք



էին թողարկում՝ սպիտակ, դասական կարմիր եւ կարմիր ռեզերվ, իսկ 2020թ. արդեն 5 տեսակի. ավելացել են ռոզեն եւ սպիտակ ռեզերվ գինիները: Արտադրանքը հիմնականում սպառվում է Հայաստանում, նախնական պայմանավորվածություններ ունեն Ֆրանսիա, Կանադա, ԸՎԵՊԻԱ, Ռուսաստանի Դաշնություն արտա-

հանելու համար:

Անդրանիկ Սարգսյանի խոսքով՝ ապրանքանիշի հիմնական գաղտնիքը տեղական խաղողն է. այն պատրաստում են «Կանգուն», «Բանանց», «Խնդրոնի» տեսակներից: Հիմնականում հենվում են տեղական սորտերի վրա, որն Արցախում տարիներ շարունակ աճեցվում էր:

Այգիներն արդեն սահմանամերձ դարձած Խրամորթում են: Այգում սեզոնի ժամանակ պայմանագրային հիմունքներով 30 հոգի է աշխատում՝ մոտակա գյուղերից: Այս տարի խաղողի այգիները էտելու ընթացքում թուրքերն սկսել են կրակել, այնուհետեւ մտել են այգին եւ աշխատողներին հանել այնտեղից: Չնայած ռուս խաղաղապահների առկայությանը, մինչ այժմ հարցը չի լուծվել:

«Քիրս»-ի տնօրենի խոսքով՝ Խրամորթի մոտակայքում խաղողն ավելի լավ է հասունանում, ավելի քաղցրահամ է, հագեցած ու խիտ: Այլ տեղերում աճեցվող խաղողի նույն սորտերն այստեղ լրիվությամբ այլ համ ունեն:

Խոսելով գինեգործությամբ զբաղվելու ցանկության մասին, Անդրանիկ Սարգսյանը նշել է, որ իրենց գերդաստանում դրա նկատմամբ սեր կար, որը փոխանցվել է նաեւ իրեն: Իսկ ինչ վերաբերում է այս իրավիճակում Արցախում արտադրություն հիմնելուն, զարգացնելուն, Արցախյան երկու պատերազմների ժամանակ վիրավորում ստացած Ա. Սարգսյանը համոզված է, որ պիտի պայքարել, ապրել ու արարել: «Ամեն ոք պետք է իր գործով զբաղվի, պարապ չլստի ու սպասի պետական աջակցություններին, եւ ամենակարեւորը՝ օգուտ տա», - կարծում է նա:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Պետք է համախմբվել, բռունցք դառնալ եւ շարունակել պայքարել

«Կարելու է, որ մեր ժողովրդին խուճապային իրավիճակից դուրս բերենք, ներշնչենք այն, ինչ որ վաղ անցյալում՝ 34 տարի առաջ է եղել»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է նախկին ուսուցիչ Լեւոն Առաքելյանը, ում հետ Արցախյան շարժման, ստեղծված իրավիճակի ու մեր անելիքների մասին օրերս առիթ ունեցանք զրույցելու:

- Պարոն Առաքելյան, խորհրդային տարիներին կարծես թե մեր եւ ադրբեջանական ժողովուրդների միջեւ եղբայրություն ու համերաշխություն էր: Ինչպե՞ս այն վերածվեց թշնամանքի:

- Ժողովուրդների համերաշխությունը սոցիալիստական գաղափարախոսություն է, որը կործանվեց 1991-ին: Չնայած որքան էլ կային ազգերի ներքին հակասություններ, միեւնույն է, խորհրդային իշխանությունները պահանջում էին, որ պետքի պահպանվի այդ համերաշխությունը: Մեր ապուրապետը ասել է. «Թուրքի հետ ընկերացիր, բայց մահակը ձեռքիցդ մի գցիր»: Մեր գյուղում մի տուն կար, որի պատերին գրված է. «Թուրքի հետ բարեկամություն չանեք. այս տունը չի սիրում թուրքերին»: Սովետական տարիներին փորձել են մաքրել գյուղությունը, սակայն չի ստացվել: Այսօր՝ աղավաղված, բայց մնացել է: Չեմ ասի, որ լավ բարեկամական հարաբերությունների մեջ էինք, սակայն ժողովուրդների միջեւ լարվածություն էլ չի դրսևորվել: Լարված պահերը միշտ թաքցնում էին: Սակայն 80-ական թվականներին համերաշխության բաժանվելուց: Երբ խորհրդային իշխանությունն առաջ քաշեց վերակառուցման եւ դեմոկրատացման գաղափարը, հող ստեղծվեց, որպեսզի ազգամիջյան հակասությունները, որոնց մասին տասնամյակներ չէր խոսվում, շրի երես դուրս գան:

- Ինչպե՞ս սկսեցին խոսել Արցախյան հարցի մասին:

- Երբ առաջ քաշվեց վերակառուցման գաղափարախոսությունը, այդ ժամանակ էլ սկսվեց խոսել Արցախյան հարցի մասին, որը սակայն չէր էլ մարում, այլ մերթընդմերթ մոխրի մեջ առկայծող մարխի նման մեկ բոցկտում էր, մեկ հանգում, քանի որ ճնշվում էր վերելից:

80-ական թվականներից քաղաքական դաշտը հասունացել էր, եւ ժողովրդի պոռթկումը բնականաբար արդարացված էր: Մեզ հետ միասին նաեւ մերձափայլ երկրներն սկսեցին իրենց պայքարը, որն էլ շատ արագ հանգեցրեց ԽՍՀՄ-ի փլուզման: Ադրբեջանում մեր ժողովրդի արդարացի պահանջն ընդունվեց որպես 2 ժողովուրդների բարեկամությունը խաթարող, եւ անմիջապես մեր փետրվարյան սեսիայից հետո սկսվեցին շարժերը Բաքվում, Սումգայիթում եւ հայաբնակ այլ շրջաններում, որին զոհ գնացին բազմաթիվ հայեր, սկսվեցին հայաթափվել այդ շրջանները:

Շարժման օրերին բոլորս ընդգրկվեցինք պայքարի մեջ: Այդ ժամանակ ես դարձրի տնօրեն էի, եւ այդ օրերին ուսումնական ծրագրերից հանեցին հայոց պատմությունը՝ փոխարենն ավելացնելով Ադրբեջանի պատմությունը, աշխարհագրությունը եւ ադրբեջաներեն՝ այսպիսով ավելի հրահրելով ժողովրդին: Ժողովուրդն սկսեց համախմբվել: Հիշում եմ, երբ Բերդաշենում կոմունիստական կուսակցության քարտուղար Յուրիկ Սողոմոնյանը իրավիճակը ժողովրդի ժողովուրդը հավաքվել էր ակումբ՝ առանց իմանալու, թե ինչու: Այդտեղ ելույթ ունեցավ Նելսոն Սոդոմոնյանը: Ես ներկայացրի, թե իրավիճակն ինչպիսին է, Մարգարիտի գործկոմի փետրվարի 20-ի նիստի որոշումը ներկայացրի:

Ազգամիջյան հարաբերություններն ավելի սաստկացան: Եկավ մի պահ, որ մեր ժողովուրդը հասկացավ, որ այս հարցը քաղաքական ճանապարհով չի լուծվի եւ կամաց-կամաց սկսեց պատրաստվել պատերազմի: Ստեղծվեցին կամավորական ջոկատներ: Մեր գյուղից, որպես առանձին վաշտ, 30 հոգով դիրքավորվեցինք Բերդաշենի տարածքներում եւ կամաց-կամաց առաջ գնացինք: Պատերազմական գործողությունները սաստիկ էին, բայց հայ ժողովրդի մարտական ոգին միշտ բարձր էր: Մենք, լինելով այս տարածաշրջանում եթե ժողովուրդը, ստիպված ենք եղել միշտ պայքարել, ու պատերազմների միջոցով ենք կարողացել գոյատևել: Շատ ժողովուրդներ անհետացել են պատմության թատերաբեմից, բայց մենք մարտնչող ժողովուրդ ենք, կարողացել ենք դիմագրավել բոլոր դժվարություններին: Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին, ինչպես 301 թվականից ընդունած կրոնին ենք հավատարիմ դավանում: Հավատքը, մեր ազգային ավանդույթները, մեր բանակը հզորացնելով՝ կարողացել ենք լինել հզոր, իսկ երբ մեր բանակը հզոր էր՝ մենք էլ անկախ էինք: Երբ երկպառակություն է սկսվել, բանակը թուլացել է, մենք էլ դժվարացել ենք դիմագրավել թշնամուն: Պատերազմը երկուստեք ծանր կորուստներ

պատճառեց, սակայն փոքր պետությունը միշտ էլ ավելի շատ է տուժում: Եթե համեմատենք՝ կտեսնենք, որ հետխորհրդային երկրներից ամենաշատը Հայաստանն է տուժել: ամենաշատ զոհերն է տվել, ամենից շատ արտագաղթը Հայաստանից է եղել, տնտեսությունն աղետալի վիճակում է գտնվում, գործազրկությունը բոլոր հանրապետությունների համեմատ՝ ամենաբարձրն է, ինչն էլ պայմանավորված է արտագաղթով:

- 44-օրյա պատերազմի հետեւանքով մենք կորցրինք այն, ինչ կարողացել էինք ձեռք բերել 34 տարիների ընթացքում: Ըստ ձեզ, այդ պատերազմն ու կորուստները դիվանագիտական աշխատանքների ճախողմա՞ն արդյունք էին:

- Չգիտեմ ինչու, 90-ականներին չավարտված պատերազմը բաժանվել է հատվածների՝ արցախյան առաջին, քառօրյա, քառասունչորսօրյա պատերազմներ: Ես այն կարծիքին եմ, որ ինչքան մասնատում ենք, այնքան մեր պայքարի արժեքն ընկնում է: Մեկ այլ բան է, եթե ասենք՝ 30-ամյա պատերազմ, մեկ այլ բան, եթե ասենք՝ 44-օրյա պատերազմ եւ միջազգային հանրությանն էլ ներկայացնենք, որ մենք, 30 տարի է, պատերազմի մեջ ենք (իսկ դա այսպես է): Պարբերաբար այդ



պատերազմն ընթացել է ակտիվ եւ պասիվ շրջաններով: Իմ ուսումնասիրությամբ՝ մենք պասիվ շրջանում վարում էինք դիրքային եւ դիվերսիոն պատերազմներ, եւ 1995 թվականից մինչեւ 2016թ. ավելի քան 2000 զինվոր է զոհվել, տարեկան նվազագույնը՝ 75, իսկ առավելագույնը՝ մինչեւ 100-120 զինվոր: Սա էլ ինքնընտանացի պատերազմ է, որն ավելի ծանր ու հոգեմաշ է, բայց, չգիտես ինչու, մենք սա չենք դիտարկում: Միջազգային հանրությանն էլ հարցը պետք է մատուցել այս հարթության մեջ: Ժամանակի ընթացքում Արցախի հարցն էլ անջատվեց Հայ դատից, որն, իմ կարծիքով, նույնպես սխալն էր, որովհետեւ հայկական հարցը երբ ձեւավորեց 19-րդ դարի վերջին, Արցախի հարցն էլ դրա բաղկացուցիչ մասն էր: Նույն ժողովրդի գլխին եկած արհավիրքներ՝ մեկը Արեւմտյան, մյուսը Արեւելյան Հայաստանում, որը պետք է իրարից չտարանջատենք, որովհետեւ որքան մասնատում, այնքան արժեգրվում ենք մեր պայքարի բուն էությունն ու նպատակները:

Պատերազմական գործողություններն անսպասելի էին, բայց ես չեի ասի, որ մեր բանակը պատրաստ չէր. սա առաջին հերթին ոչ թե մեր բանակի պարտությունն էր, այլ՝ դիվանագիտության: Եվ եթե ճիշտն եք ուզում իմանալ, մեր դիվանագիտության պարտությունն սկսվել է 1994-ից, երբ կնքված զինադադարը կոչեցինք հաղթանակ եւ մեր դիվանագիտությունն սկսեց անտեսել այն, ինչ Ադրբեջանն անընդհատ պնդում էր: Այդ զինադադարից հետո՝ թեւեւ Ադրբեջանը պարտվել էր, սակայն հանդես չէկավ պարտվողի դերում այնպես, ինչպես որ մենք ենք իմիս հանդես գալիս, եւ իր ժողովրդին չէր ներշնչում այդ դառնությունը, ընդհակառակը՝ իր ժողովրդին պատրաստում էր այսպես կոչված «հողերը հետ բերելուն», որն էլ ի վերջո իրագործեց: Մենք այդ փաստն անտեսում էինք, ինչն էլ մեզ հասցրեց այս պարտությանը: Թշնամին որքան էլ մեր կարծիքով թույլ լինի, չպետք է նրան անտեսել: Մենք տեսնում էինք, թե Ադրբեջանն ինչպես է գինջում, ինչպես է մուսուլմանական աշխարհը վերաբերվում հարցին, սակայն մեր դիվանագիտությունը չէր կարողանում աշխատել այնպես, ինչպես որ պետք էր: Պատմությունն ապացուցում է, որ երբ լուրն են թնդանոթները, պետք է գործեն դիվանագետները: Ես հիշում եմ Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուի այն հայտարարությունը, որտեղ նա նշել էր. «Այնտեղ, որտեղ մեր

դիվանագիտությունը լավ չի աշխատում, մեր զինվորներն են աշխատում, իսկ որտեղ զինվորները չեն աշխատում, մեր դիվանագետներն են աշխատում»: Բնականաբար, պետք է նկատի ունենանք, որ այսօր թուրքական դիվանագիտությունը շատ ակտիվ է աշխատում: Դեռեւս 20-րդ դարասկզբին Աթաթուրքն այսպես է ասել. «Թուրք զինվորը կպարտվի, թուրք դիվանագետը՝ ոչ», որին էլ ականատես ենք լինում այսօր: Ցավոք, մենք դասեր չենք քաղում մեր հետագա պայքարն ավելի ճիշտ նախանշելու համար: Այսօր քան երբեւէ, մեր դիվանագիտությունը պետք է աշխատի շատ ճկուն՝ ի նպաստ մեր ժողովրդի: Թուրքիայի արտգործնախարարը, նախագահի օգնականը, ռազմական նախարարը 44-օրյա պատերազմի սկզբում ներկայացնում էին, թե չեն օգնել Ադրբեջանին, սակայն արդեն վերջերս հայտարարում են, որ առանց իրենց անմիջական մասնակցության Ադրբեջանը հաղթանակի չէր հասնի: Սա շատ կարելու նրբություն է, որը մենք չենք նկատում: Թուրքիան աստիճանաբար Ադրբեջանին իրենից կախվածության մեջ է դնում եւ պակասեցնում իր ռազմական հզորությունը: Սա խոսում է այն մասին, որ մեր ռազմական հզորությունը շատ ավելին էր, քան Ադրբեջանինը, եւ միայն Թուրքիայի միջամտությամբ փոխվեց ուժերի հարաբերակցությունը: Թուրքիայի նպատակը Ադրբեջանին էներգետիկ ռեսուրսների տիրանալն է: Պետք է Ադրբեջանի ժողովրդին հասկացնել Թուրքիայի իրական նկրտումների մասին:

- Ստեղծված իրավիճակից տեսնո՞ւմ եք ելք:

- Մեր կառավարության ռազմավարությանը պետք է ժողովուրդն էլ տեղյակ լինի: Շարժման սկզբին, դեռեւս 1988թ. երկրաշարժի օրերին, երբ Գորբաչովը ժամանեց Հայաստան, մարդիկ՝ մոռանալով ավերածությունները, առաջին հերթին հարցնում էին, թե ինչպե՞ս է լուծվելու Դարաբաղի հարցը: Այս հարցը միշտ եղել է մեր ժողովրդի առաջնային հարցը: Նույնիսկ մարդը մահվան ճիւղին ներում այս հարցն էր տալիս իր հարազատներին՝ վերջն ի՞նչ է լինելու: Հիմա էլ եկել ենք նույն կետին, եւ պետք է բոլորին հետաքրքրի մեր վերջն ի՞նչ է լինելու: Ժողովրդը պետք է ինչ-որ հետաքրքիր ունենա, որովհետեւ, եթե մեր ոտքերի տակ հողը ամուր չեղավ, միշտ կերբանք եւ պատահական քամուց կընկնենք, քաղաքական հոսանքները կքշեն ու կտանեն: Մեր պայմաններում ժողովուրդը պետք է ստույգ տեղյակ լինի, թե ինչ ռազմավարություն ենք մշակել, որպեսզի կարողանանք տակավին շարունակվող այս պայքարում հաղթանակ տանել, եւ սերունդներին չթողնենք այն, ինչ-որ մեր ուսերին է դրված:

Կոչ եմ անում մեր պատգամավորներին՝ հանդիպել հասարակության հետ, իրենց կարծիքն արտահայտել եւ ժողովրդի կարծիքն իմանալ, գուցե ժողովուրդն էլ կարող է օգնել, ստորագրահավաքներ անել, արձանագրություններ կազմել եւ միջազգային հանրությանը ներկայացնել, որ ժողովուրդն է պայքարի մեջ, սա ժողովրդի կամքն է: Մի՞-ի, ԱԳՆ-ի եւ ԱԾ-ի հայտարարությունները պաշտոնական բնույթ են կրում, բայց երբ ժողովուրդն իր ցասումը ցույց տա, սա միանգամայն այլ բնույթ կարող է կրել:

ԱՀ ԱԾ նախագահը կարելու առաջարկություն արեց՝ նամակով դիմել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին եւ իրավիճակը Արցախ: Սակայն ես այն կարծիքին եմ, որ այդ նամակը ոչ թե ԱՀ ԱԾ անունից, այլ ժողովրդի անունից պետք է հղվի, եթե հարկ կա՝ անգամ ժողովրդի ստորագրություններով: Ուստի, կարելու է նաեւ մեր ժողովրդի ակտիվությունը քաղաքական դաշտում նկատելի դարձնել:

- Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակը հաշվի առնելով՝ արդյո՞ք հնարավոր եք համարում ժողովրդի համախմբումը:

- Ինքս ինձ հարցնում եմ, իսկ ինչպե՞ս համախմբել ժողովրդին: Այսօր թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում ստեղծվել են տասնյակ կուսակցություններ՝ տարբեր գաղափարներով կարապի, խեցգետնի, գայլաձկան պատմությունն ստեղծելով: Այդպիսի իրավիճակով ժողովրդին համախմբել չի հաջողվի: Սակայն Դաշնակցությունը քաղաքական դաշտում գտնվող միակ փորձառու կուսակցությունն է, որն անցել է եւ հրով, եւ սրով, ամեն մի պայքարի մեջ թործվել է, հայկական Դատի նրբություններին քաջատեղյակ է եւ միշտ էլ եղել է պայքարի առաջամարտիկը: Խորհրդային գաղափարախոսությունից եկած ժողովրդի մեջ տարածված կարծիք է, որ Դաշնակցությունը պատերազմների կողմակից է, սակայն, իհարկե, դա այդպես չէ: Պետք է համախմբվել, բռունցք դառնալ եւ շարունակել պայքարել: Մեր ժողովրդին խուճապային իրավիճակից պետք է դուրս բերենք, ներշնչենք այն, ինչ որ վաղ անցյալում՝ 34 տարի առաջ է եղել:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կոնույանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արժարժեք չունենանք չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան